## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

## ՀԱԱՀ-ԳՀԾՁԲ-26/64 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան** **01 հունիսի 2026թ.**

2026թ. մայիսի 22-ից հունիսի 01-ը, ՀՀ, ք. Երևան, Տերյան 74 հասցեում գտնվող «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի շենքում տեղի ունեցավ թերթերի և ամսագրերի բաժանորդագրության ծեռքբերման թիվ ՀԱԱՀ-ԳՀԾՁԲ-26/64 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Լ. Վարդանյան՝ | «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Գրադարանի վարիչ, |
| Գ. Հովսեփյան՝ | «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Գրադարանի վարիչի տեղակալ, |
| Ա. Էֆենդյան՝ | «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Ավագ-գրադարանավար, |
| Յ. Բանգոյան՝ | «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Ավագ-գրադարանավար, |
| Կ. Ավետիսյան՝ | «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Ավագ-գրադարանավար: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Լ. Վարդանյանը, ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ս. Մելքոնյանը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր հինգ անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված Հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջը համարվում է պահպանված, իսկ նիստն իրավազոր, որպիսի փաստով պայմանավորված Հանձնաժողովի նիստը հայտարարվեց բացված:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների մասին:
2. Ընթացակարգին ներկայացված հայտեր պարունակող ծրարները գնահատելու մասին:

3. Բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության մասին:

4. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների, ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:

5. Ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարելու մասին:

6. Ընթացակարգի արդյունքում հրապարակվող հայտարարությունների տեքստը հաստատելու և անգործության ժամկետ սահմանելու մասին:

7. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

8. Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին:

## 1. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2026թ. մայիսի 22-ին, ՀՀ, ք. Երևան, Տերյան 74 հասցեում գտնվող «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի շենքում ժամը 14:00-ին նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված հետևյալ տեղեկատվությունը.

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված գնման գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1-ին | Ветеринария (Վետերինարիա) | 87,600.00 |
| 2-րդ | Защита и карантин растений (Զաշիտա ի կարանտին րաստենիյ) | 50,000.00 |
| 3-րդ | Земледелие (Զեմլեդելիե) | 52,000.00 |
| 4-րդ | Молочное и мясное скотоводство (Մոլոչնոե ի միսնոե սկոտովոդստվո) | 65,000.00 |
| 5-րդ | Пищевая промышленность (Պիշեվայա պրոմիշլեննոստ) | 165,000.00 |
| 6-րդ | Экономика сельскохозяйственных и перерабатывающих предприятий (Էկոնոմիկա սելսկոխոզյաիստվեննիխ ի պերերաբատիվայուշիխ պրեդպրիյատիի) | 65,000.00 |

Ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԾՐԱՐՆԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընթացակարգին մասնակցելու հայտ/եր/ է/են/ ներկայացրել հետևյալ անձ/ը/ինք/ /այսուհետ՝ նաև Մասնակից/ներ/ը/.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Հասցե | Հեռախոս | Էլ. փոստ | ՀՎՀՀ |
|---|---|---|---|---|---|
| 1 | «Բլից Մեդիա» ՍՊԸ | ք. Երեւան, Ագաթանգեղոսի 6 | +37410525301, +37494525301 | info@pressinfo.am | 01277633 |
| 2 | «Սարգսյան Թրեյդ» ՍՊԸ | Երևան, Տիգրան Մեծի պողոտա, 63 | +37493870222, 010562575 | sargsyant99@mail.ru | 02547465 |

Հանձնաժողովը գնահատեց հայտ կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմված և ներկայացված են Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ սահմանված պահանջներին համապատասխան:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 3. ԲԱՑՎԱԾ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԾՐԱՐՈՒՄ ՊԱՀԱՆՋՎՈՂ (ՆԱԽԱՏԵՍՎԱԾ) ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը գնահատեց բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին, ինչպես նաև արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերում Ընթացակարգի հրավերով /ծանուցմամբ/ պահանջված փաստաթղթերը առկա են և կազմված են սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ.

**«Բլից Մեդիա» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է ընթացակարգին մասնակցելու «ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» փաստաթուղթը՝ համաձայն հավելված N 1-ի փաստաթուղթը:

**«Սարգսյան Թրեյդ» ՍՊԸ-ի** կողմից Հավելված 1-ով ներկայացվող «ԴԻՄՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» փաստաթղթում, այդ թվում նաև Հավելված 2-ով ներկայացվող «ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ» փաստաթղթում՝ «Մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)» դաշտը լրացված չէ:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 4. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԱՅԴՊԻՍԻՆ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած Մասնակից/ներ/ի գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը.

ՀՀ դրամ

| Չափաբաժնի անվանումը | | Մասնակցի անվանում | Գնման հայտով սահմանված գինը | Մասնակիցների առաջարկած գները | | |
|---|---|---|---|---|---|---|
| N | Հայերեն | | | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1-ին | Ветеринария (Վետերինարիա) | «Սարգսյան Թրեյդ» ՍՊԸ | 87600 | 87600 | 0 | 87600 |
| 2-րդ | Защита и карантин растений (Զաշիտա ի կարանտին ռաստենիյ) | «Սարգսյան Թրեյդ» ՍՊԸ | 50000 | 50000 | 0 | 50000 |
| 3-րդ | Земледелие (Զեմլեդելիե) | «Բլից Մեդիա» ՍՊԸ | 59000 | 52000 | 0 | 52000 |
| | | «Սարգսյան Թրեյդ» ՍՊԸ | | 59000 | 0 | 59000 |
| 4-րդ | Молочное и мясное скотоводство (Մոլոչնոե ի միսնոե սկոտովոդստվո) | «Բլից Մեդիա» ՍՊԸ | 70000 | 65000 | 0 | 65000 |
| | | «Սարգսյան Թրեյդ» ՍՊԸ | | 70000 | 0 | 70000 |
| 5-րդ | Пищевая промышленность (Պիշեվայա պրոմիշլեննոստ) | «Սարգսյան Թրեյդ» ՍՊԸ | 165000 | 165000 | 0 | 165000 |
| 6-րդ | Экономика сельскохозяйственных и перерабатывающих предприятий (Էկոնոմիկա սելսկոխոզյաիստվեննիխ ի պերերաբատիվայուշիխ պրեդպրիյատիի) | «Բլից Մեդիա» ՍՊԸ | 65000 | 65000 | 0 | 65000 |
| | | «Սարգսյան Թրեյդ» ՍՊԸ | | 66000 | 0 | 66000 |

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

2026թ. մայիսի 25-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ներկայացված տեղեկատվությունը ընդունել ի գիտություն:

2. Ղեկավարվելով Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի և Ընթացակարգի հրավերի առաջին մասի 8.2 կետի պահանջներով՝ «Սարգսյան Թրեյդ» ՍՊԸ-ի հայտը 1-6-րդ չափաբաժինների մասով գնահատել որպես անբավարար և մերժել:

3. Ընթացակարգը՝ 1-2-րդ, 5-րդ չափաբաժնների մասով հայտարարել չկայացած՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի:

4. Նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և առաջարկել Մասնակից/ներ/ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել շտկման ենթակա արձանագրված անհամապատասխանությունը՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

2026թ. մայիսի 27-ին Հանձնաժողովն արձանագրեց, որ.

1. Մասնակից/ներ/ի կողմից սահմանված ժամկետներում ներկայացվել են հանձնաժողովի կողմից արձանագրված թերությունների շտկված տարբերակները:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

2026թ. հունիսի 01-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ներկայացված տեղեկատվությունը ընդունել ի գիտություն.
2. Գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:
3. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Չ/Հ | Մասնակցի անվանումը | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 3-4-րդ, 6-րդ | «Բլից Մեդիա» ՍՊԸ | բավարար |
| 1-6-րդ | «Սարգսյան Թրեյդ» ՍՊԸ | անբավարար |

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

2026թ. հունիսի 01-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշել և հայտարարել ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցներին, որոնք ներկայացված են ստորև բերվող աղյուսակում.

ՀՀ դրամ

| Չափաբաժնի N | Մասնակցի անվանումը | Ընտրված մասնակցի դեպքում նշվում է "X" | Մասնակցի առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ |
|---|---|---|---|
| 1-ին | «Սարգսյան Թրեյդ» ՍՊԸ | | 87600 |
| 2-րդ | «Սարգսյան Թրեյդ» ՍՊԸ | | 50000 |
| 3-րդ | «Բլից Մեդիա» ՍՊԸ | X | 52000 |
| | «Սարգսյան Թրեյդ» ՍՊԸ | | 59000 |
| 4-րդ | «Բլից Մեդիա» ՍՊԸ | X | 65000 |
| | «Սարգսյան Թրեյդ» ՍՊԸ | | 70000 |
| 5-րդ | «Սարգսյան Թրեյդ» ՍՊԸ | | 165000 |
| 6-րդ | «Բլից Մեդիա» ՍՊԸ | X | 65000 |
| | «Սարգսյան Թրեյդ» ՍՊԸ | | 66000 |

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 5. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով վերոգրյալը, 2026թ. հունիսի 01-ին Հանձնաժողովը որոշեց, որպես Ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով որպես ընտրված և այդպիսին չճանաչված մասնակից հայտարարել սույն արձանագրության 4-րդ կետով ներկայացված Աղյուսակում նշված՝ հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից այն մասնակիցներին, ովքեր ներկայացրել են նվազագույն գնային առաջարկ:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 6. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Ս. Մելքոնյանը Հանձնաժողովին ներկայացրեց Ընթացակարգի արդյունքում հրապարակվող հայտարարության/ների տեքստերի նախագծերը:

Հանձնաժողովը որոշեց.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:
2. Հաստատել Ընթացակարգի արդյունքում հրապարակվող հայտարարության/ների տեքստը:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 7. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ տեղի չեն ունեցել:
2. Գնման վերաբերյալ հարցումներ, պարզաբանումներ չեն եղել և հիմնավորումներ չեն պահանջվել:
3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:
4. Գնման գործընթացի վերաբերյալ բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 8. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց պայմանագրերի նախագծերը:

Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել պայմանագր/եր/ի նախագ/ի/ծ/եր/ը,
2. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված ճանաչված մասնակից/ներ/ին ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ սահմանված ժամկետում պայմանագիրը

չստորագրելու, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում մասնակիցը կզրկվի պայմանագիրը կնքելու իրավունքից՝ համաձայն Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Լ. Վարդանյան ____________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Գ. Հովսեփյան ____________

Ա. Էֆենդյան ____________

Յ. Բանգոյան ____________

Կ. Ավետիսյան ____________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Ս. Մելքոնյան ____________